ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2023թ. փետրվարի 27

N 40 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ՈՒ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, **որոշում եմ՝**

1. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական մշտական հսկողության համակարգ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2005 թվականի նոյեմբերի 1-ի N 54-Ա որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Արագածոտնի մասնաճյուղ,
2) Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոն,
3) Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արագածոտնի մարզային կենտրոն,
4) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքային ստորաբաժանումներ,

5) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն,

6) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն,

7) «Նաիրի Լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

8) «Թամարա Ֆրութ» փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

9) «Արմենիա Վայն» գործարան սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

10) «Հայասի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա:»

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալին:

3. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Invalid signature

VERIFIED OCSP 2/27/2023 17:01:17 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

ՍՈՎՍԻՍՅԱՆ